

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՌԻՆԵ ԳՐԻԳՈՐԻ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 1991-2000 ԹԹԸ.

Է.00.01- «Հայրց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
առեւախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մինասյան Է.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Աբրահամյան Զ.Ս.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Զաքարյան Լ.Ս.

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարան:

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թ. սեպտեմբերի 30-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ ՀՀ ԲՌՀ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղդասյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. հուլիսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հ.Ղ. Մուրադյան

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 20-րդ դարի 90-ական թթ. հետխորհրդային երկրներում, մասնավորապես Չայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ծալալույն, հիմնարար փոփոխությունները, ագրարային վերակառուցումների ոչ դյուրին ընթացքը և նույնիսկ մինչ այսօր դրանց հետևանքների ոչ միանշանակությունը խնդիր են դրում խոր և համակողմանի ուսումնասիրել կատարված գործընթացները: Անկախությունը վերականգնած ԴՀ-ում հայ ժողովրդի պատմության շատ հիմնախնդիրներ նորոպի ու թարմ մեկնաբանությունների կարիք ունեն: Դրանք 1990-ական թթ. ենթակա չէին խոր ուսումնասիրության կամ էլ ներկայացվել են իշխող վերնախալի հրամայականներին համապատասխան: Նման հիմնախնդիրներից են ագրարային վերակառուցումների և սեփականաշնորհման գործընթացի հետ կապված հարցերը:

Ուսումնասիրվող թեման հայոց նորագույն պատմության բաղկացուցիչ մասը լինելով՝ կարևոր նշանակություն ունի նշված շրջանի (1991-2000 թթ.) պատմության մասին ամբողջական պատկերացում կազմելու տեսանկյունից: Դայոց պատմության վերջին տասնամյակների՝ մեզ հետաքրքրող շրջանի տնտեսական, մասնավորապես ագրարային վերակառուցումներին առնչվող պատմությունը դեռևս համակողմանի ուսումնասիրված չէ և հիմնականում ներկայացված է մեծ մասամբ իրարմերժ մոտեցումներով: Այսօր՝ վերակառուցումներից մոտ 10 տարի հետո, հիմնախնդիրը նորոպի և գիտական ուսումնասիրության կարիք ունի:

Ներկայումս պատմաբանները հնարավորություն ունեն նախկին բացթողումները լրացնելու ճանապարհով հանգել Չայաստանի Հանրապետության տնտեսական, հասկապես ագրարային վերակառուցումների շատ կողմերի անկողմնակալ լուսաբանմանն ու գիտական արժեարմանը:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՆԵՐԸ: Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1991-2000 թթ.: Անշուշտ շեշտը դրվել է անկախությանը նախորդած մի քանի տարիներին հայկական գյուղի խնդիրների, գյուղատնտեսության անցումային փուլի առանձնահատկությունների վերլուծության, ասպ նոր միայն ԴՀ-ում ագրարային վերակառուցումների նախապատրաստման, իրականացման, դրանց հետևանքների լուսաբանման վրա: Ուսումնասիրության տասնամյա ժամանակահատվածը բացատրվում է նրանով, որ ագրարային վերակառուցումների ընթացքն ու արդյունքները, վերակառուցումների ժամանակ սեփականաշնորհված հողերի, անասնազրկաքանակի, անասնապահական նշանակության շինությունների, նաև գյուղմթերքների աճի կամ նվազման դինամիկան ավելի սեղմ ժամկետում հնարավոր չէր ցույց տալ: Բացի այդ, մասնավորեցման գործընթացները արդեն 2000 թ. դրությամբ հիմնականում ավարտված էին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսությունը նվիրված է հայ պատմագիտության կողմից դեռևս համակողմանի չուսումնասիրված մի խնդրի՝ ագրարային վերակառուցումներին: Ատենախոսության մեջ խնդիր ենք դրել 1991-2000 թթ. ագրարային վերակառուցումները ներկայացնել ԴՀ սոցիալ-տնտեսական, քաղաքական ու հասարակական զարգացման խորապատկերի վրա՝ որպես ընդհանուր շրջայի մի կարևոր օղակ: Դրապարակի վրա եղած աշխատություններում լոկ մասնակորեն է շրջափվել ագրարային

վերափոխումների խնդիրը, ինչը, սակայն, չի կարող լրիվ պատկերացում տալ քննարկվող նյութի մասին: Այս առումով սույն ուսումնասիրությունը նոր փորձ է քննելու և լուսաբանելու ագրարային վերափոխումների, մասնավորապես հողի սեփականաշնորհման ամբողջական պատմությունը:

Առեմախտության հիմնական նպատակն է արհիվային փաստաթղթերի, ժամանակի պարբերականներում առկա փաստական նյութի, գիտական ժողովածուներում հրատարակված հոդվածների, պատմագիտական և տնտեսագիտական արժեքավոր աշխատությունների, բազմաբնույթ հուշագրությունների համակողմանի ուսումնասիրությամբ բացահայտել ու ամբողջական ձևով ներկայացնել ագրարային վերափոխումների ընթացքն ու հետևանքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԻՆ: Կատարված աշխատանքը, որպես նորույթ, կարելի է արժևորել հետևյալ առումներով.

1. Համադրելով բազմաթիվ արհիվային փաստաթղթեր, ազգային վիճակագրական տվյալներ՝ համակողմանի վերլուծության է ենթարկվում մինչև օրս իր ողջ ընդգրկմամբ գիտական հետազոտության չարժանացած այնպիսի կարևոր հիմնասարք, ինչպիսին 1990-ական թթ. ՀՀ-ում իրականացված ագրարային վերափոխումներն են:

2. Առեմախտության մեջ փորձ է արվում ներկայացնելու 1991-2000թթ. վերափոխումներն իրականացրած վարչակարգերի վարած ագրարային քաղաքականության ուղղությունները, դրանց թերություններն ու առավելությունները:

ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ՆՐԱՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Աշխատանքը շարադրվել է աղբյուրագիտական հարուստ հենքի վրա: Մեր կողմից օգտագործված աղբյուրները կարելի է բաժանել չորս խմբի. ա) արհիվային փաստաթղթեր, բ) օրենսգրքեր, պայմանագրերի ժողովածուներ, օրենսդրական ակտեր, վիճակագրական տարեգրքեր և այլն, գ) իրադարձությունների կենտրոնում կանգնած գործչների ու ժամանակակիցների աշխատություններ, դ) ժամանակաշրջանը լուսաբանող պարբերական մամուլ: Մանրակրկիտ ուսումնասիրվել են Հայաստանի Ազգային արհիվի (այսուհետ՝ ՀԱԱ) ¹, ¹¹³², ¹²³³, ¹⁶⁷⁸⁴ ֆոնդեր: Դրանք պարունակում են անկախության նախօրեին և անկախությանը հարողած մի բանի տարիների հողի, ամասնազիլաբանակի, գյուղատնտեսական տեխնիկայի սեփականաշնորհման գործընթացի մասին ՀՀ Գյուղատնտեսության նախարարության և ՀՀ Նախարարների խորհրդի ընդունած որոշումները և հրամանները: 1678 ֆոնդը ձեռագիր փաստաթղթեր է պարունակում սեփականաշնորհման ընթացքում տեղ գտած կոռուպցիոն դեպքերի մասին:

ԽՄՄ-ի փլուզումից հետո անկախ Հայաստանի Հանրապետության ձևավորումը խնդիր էր դնում ստեղծել նոր, հանրապետությանը համապատասխան օրենսդրական դաշտ, որով պետք է կարգավորվեին կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում նաև սոցիալ-տնտեսական բնագավառը: ՀԽՄՂ Գերագույն խորհուրդը օրենսդրական փակուղուց դուրս գալու նպատակով 1990 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունեց «Հայաստանի անկախության մասին հռչակագրին

¹ ՀԱԱ, ֆ. 1, գ. 82, գ. 131, թթ. 1-6:

² ՀԱԱ, ֆ. 113, գ. 163, գ. 341, բ. 3, գ. 426, թթ. 12-13, գ. 164, գ. 716, թթ. 1-2, գ. 165, գ. 42, բ. 4, թթ. 59-64, գ. 85, բ. 2, գ. 170, թթ. 1-2, գ. 171, գ. 173, թթ. 4-7, գ. 205, թ. 1, գ. 325, թթ. 1-4, գ. 400, թթ. 1-2, 4-8, գ. 415, բ. 42, գ. 426, թթ. 12-13, գ. 171, գ. 716, թթ. 1-2

³ ՀԱԱ, ֆ. 123, գ. 77, գ. 2, թթ. 52-54, 73-74, գ. 8, բ. 28:

⁴ ՀԱԱ, ֆ. 1678, գ. 1, գ. 25, բ. 68, գ. 40, թթ. 3-7, գ. 50, թթ. 7-8:

համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» օրենքը⁵, որի համաձայն մինչև նոր Սահմանադրության ընդունումը դադարեցվում էին սահմանադրական այն դրույթների գործադրությունը, որոնք հակասում էին հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին:

Ար հանրապետությունում սեփականության ինստիտուտի ձևավորումը լուսաբանելու համար օգտվել ենք 1990թ. սեպտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին»⁶, 1990թ. հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության սեփականության մասին»⁷, «Սեփականության մասին» (հոկտեմբեր 1990)⁸ և «Գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին»⁹ ՀՀ օրենքներին: Արանք պետական մենատիրության վերացմանը և շուկայական հարաբերությունների ձևավորմանն ուղղված առաջին օրենսդրական ակտերն էին:

Հողի հանդեպ սեփականության իրավունքի ամրագրումը ՀՀ-ում կարգավորվել է հողային օրենսգրքի (հունվար, 1991) ընդունումով, որն արժեքավոր աղբյուր է հողային հարաբերությունների էությունը լուսաբանելու համար¹⁰:

Սեփականաշնորհման առաջին տարիներին հողի հարկերի վճարման կարգը լուսաբանել ենք՝ համաձայն Հողահարկի մասին ՀՀ օրենքի¹¹: Սեփականաշնորհման ավելի ուշ շրջանի՝ 1997-1998թթ. ընթացքը վերլուծելու համար հիմք է հանդիսացել «Պետական ունեցվածքի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը¹²: Գյուղատնտեսության ոլորտում հանրապետության արտաքին տնտեսական համագործակցությունը վերլուծելու համար օգտվել ենք ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածուից¹³:

Ազգայային ոլորտում սեփականաշնորհման հետևանքները, խորհրդատեսությունների և կոլտնտեսությունների փոխարեն ձևավորված նոր, մասնավոր գյուղացիական տնտեսությունների թվաքանակը պարզելու, գյուղատնտեսական մթերքների արտադրության տատանումները սեփականաշնորհումից հետո տարբեր տարիների կտրվածքով և ըստ ճյուղային կառուցվածքի վերլուծելու համար անհրաժեշտ թվական տվյալները բերել ենք ՀՀ պետական վիճակագրության վարչության 1991-2000թթ. հրատարակած վիճակագրական տարեգրքերից, որոնք տեղակայված են նաև համապատասխան էլեկտրոնային

⁵ «Հայաստանի անկախության մասին հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» օրենք, ընդունված 10.12.1990 թ., Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995:

⁶ Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին օրենք, ընդունված 10.09.1990. Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.):

⁷ Հայաստանի Հանրապետության օրենքը սեփականության մասին, ընդունված 31.10.1990. Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.):

⁸ Հայաստանի Հանրապետության օրենքը Սեփականության մասին, 31.10.1990. Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.):

⁹ Հայաստանի Հանրապետության օրենքը «Գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին», 22.01.1991, Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 67-80:

¹⁰ ՀՀ հողային օրենսգրքը, Եր., 1991 (Փոփոխությունները՝ 02.05.2001): ՀՀ հողային օրենսգրքը, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, հ. 17 (149), 15 հունիսի, 2001:

¹¹ Հայաստանի Հանրապետության օրենքը Հողահարկի մասին, ընդունված 27.04.1994, Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.):

¹² Հայաստանի Հանրապետության օրենքը «Պետական ունեցվածքի սեփականաշնորհման մասին» ընդունված 17.12.1997, ՀՀ գործող օրենքների ժողովածու. 1995-1999, Եր., 1999:

¹³ Сборник международных договоров Республики Армения 1991-1995, Եր., 2002, № 4.

կայքում¹⁴: Սեփականաշնորհման արդյունքում մշակութային գույքի մնացած վարելահողերի թվաքանակի մասին տվյալները ներկայացրել ենք ըստ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1998 թ. հունվար-դեկտեմբերին» տարեգրքի¹⁵:

Սեփականաշնորհումից հետո գյուղացիական տնտեսությունների միջև հողահատակացումների չափի մասին տվյալները վերցված են ՀՀ Պետվիճվարչության 1997 թ. հրապարակումներից: Ուսումնասիրված 3400 գյուղացիական տնտեսությունների 48%-ը ուներ մինչև 1 հա հող, 28 %-ը՝ 1-2 հա: Այսպիսով, գյուղացիական տնտեսությունների 3/4-ից ավելին ունեին 2 հա-ից պակաս հող, որը տրոհված էր 2-3 տարբեր հողակտորների: Նման տվյալներն աշխատանքում օգտագործվել են հիմք ընդունելով վիճակագրական վերլուծությունները¹⁶:

ՀՀ ագրարային ոլորտի ուսումնասիրումը թերի կլիներ առանց ոռոգման համակարգի վիճակի ներկայացման: Մի շարք բնակավայրերի ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման, եղած ջրանցքների երկարության, տեղադրության, նաև շահագործման հանձնված ոռոգման խողովակաշարերի մասին 1999 թ. դրությամբ տեղեկությունները վերցրել ենք «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական ուսումնասիրությունից¹⁷:

Անդրադառնալով գյուղտեխնիկայի սեփականաշնորհմանը՝ նշենք, որ հողի և արտադրամիջոցների սեփականաշնորհումից հետո անցած ժամանակաշրջանում գյուղացիական տնտեսություններում հատկապես դժվար էր լուծվում արտադրական գործընթացների մեքենայացման խնդիրը: Հանրապետության ավելի քան 332 հազար գյուղացիական տնտեսությունների նյութատեխնիկական բազան 2000 թ. դրությամբ թվական ցուցանիշներով ներկայացնելու համար կարևոր նշանակություն ունի 1999-2000 թթ. վիճակագրական տարեգիրքը¹⁸:

Ժամանակակից գործիչների ու ակաճատների հաղորդած տեղեկություններն ամփոփված են մենագրություններում:

Հետազոտության արջուրագիտական չորրորդ շերտը կազմում են ժամանակի պարբերական մամուլից բաղված նյութերը, նաև ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ վերափոխումներից որոշ ժամանակ անց մամուլի տարբեր օրգաններում լույս տեսած հոդվածներն ու հրապարակումները («Հայաստանի Հանրապետություն», «Ազրո», «Առավոտ» և այլն):

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃՆԸ: Ագրարային վերափոխումների, հողային հարաբերությունների, գյուղատնտեսության դրախտ տնտեսության կարևոր ճյուղի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է

¹⁴ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, 1990 թ., Եր., 1991: Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 1997-1998 թթ., Եր., 2001:

¹⁵ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1998թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 1999:

¹⁶ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1997թ. հունվար-մարտին, Եր., 1997, էջ 15, 16, 63, 64 և ՀՀ Պետվիճվարչության գյուղացիական տնտեսությունների հետազոտություն, 1997:

¹⁷ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2000:

¹⁸ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1999-2000 թթ., Եր., 2001, www.armstat.am:

պարունակում Վ.Մովսիսյանի «Հողի ճակատագրով, մտորումներ տքնության» մենագրությունը¹⁹: Պետական-կուսակցական գործիչ Վլադիմիր Մովսիսյանի գիրքը վերլուծական իրապատում է հանրապետության կյանքում ճակատագրական կարևոր դեպքերի և իրադարձությունների մասին: Հեղինակը, լինելով ՀՀ Գյուղատնտեսության նախարար (1996 թ. նոյեմբեր-1999 թ. մայիս), առավել բաջատելյան է վերափոխումների ընթացքի մանրամասներին, գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության ծրագրերին և այլն: Նա վեր է հանել ագրարային հատվածում կուտակված և լուծման կարող մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես հողի շուկայի բացակայությունը, գյուղատնտեսության ցածր մակարդակը, ագրարային ոլորտի գիտակրթական սպասարկման և խորհրդատվական ծառայությունների անկատարությունը և այլն:

Դեպքերի թարմ տպավորություններով և սեփականաշնորհման ընթացքին անձնական մասնակցության փորձով է զուլված Հ. Բագրատյանի «Земельная реформа: вопросы теории и практики»²⁰ աշխատությունը, որտեղ հեղինակը դրական կողմերով է ներկայացնում ագրարային վերափոխումները, հատկապես հողի սեփականաշնորհումը: Հեղինակի բերած թվական տվյալները, որ վերաբերում են գյուղմթերքների արտադրության դինամիկային, համեմատել ենք ՀՀ պետլիծվարչության տվյալների հետ և պարզել ենք նախկին վարչապետի ներկայացրած թվերի անհամապատասխանությունը իրական արտադրության ծավալներին: Բացի այդ, Հ. Բագրատյանը խիստ բացասաբար է ներկայացրել 1998 թվականից հետո իրականացված վերափոխումները՝ հասկանալի պատճառներով դրանք բացատրելով նոր վարչակարգի՝ նման վերափոխումներ կատարելու «անկարողությամբ»: Ընդհանուր առմամբ աշխատությունը գերծ չէ կուսակցական կողմնապահ մեկնաբանություններից ու զննատականներից:

Երրորդ հանրապետության պատմության ագրարային ոլորտի վերափոխումների էության մասին չկա ամփոփ ուսումնասիրություն, որտեղ վերհանված և վերլուծված լինեին այդ վերափոխումների էությունը, նշանակությունը, վերափոխումների առանձնահատկությունները: Դա, սակայն, չի նշանակում, թե ընդհանրապես ոչինչ չի արվել այդ ուղղությամբ: Հայ պատմաբաններից Երրորդ հանրապետության պատմության առանձին հարցերի անդրադարձել են Գ. Ս. Գեղամյանը և Ռ. Վ. Ազիզբեկյանը²¹: Նրանց ուսումնասիրության շրջանակները, սակայն, ընդգրկել են հանրապետության առաջին տարիների պատմության ոչ մեծ թվով հարցեր:

Հայ պատմագրությունը 1990-ական թվականներին թևակոխեց զարգացման մի նոր շրջան, երբ Հայաստանի պատմությունը հնարավոր դարձավ լուսաբանել նորովի: Հասարակական-քաղաքական նոր պայմանները հնարավորություն ստեղծեցին շատ ու շատ հիմնախնդիրներ ենթարկելու բազմակողմանի հետազոտության: Այդ տեսանկյունից աչքի է ընկնում Է. Սինալյանի «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.)» մենագրությունը²², որը նվիրված է Հայաստանի

¹⁹ Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով, մտորումներ տքնության, Եր., 2001:

²⁰ Баграмян Г., Земельная реформа: вопросы теории и практики, Ер., 2003.

²¹ Գեղամյան Գ., Ազիզբեկյան Ռ., Հայաստանը 1945-1990-ական թթ., Եր., 1994: Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Համառոտ ակնարկ, Եր., 1992:

²² Սինալյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Եր., 2003:

երրորդ Հանրապետության սոցիալ-տնտեսական վերափոխումների ավելի քան 10 տարվա պատմության ուսումնասիրությանը: Այն արվիվային նյութերի և վիճակագրական տվյալների հիման վրա կատարված պատմաքննական ամբողջական ուսումնասիրություն է, որտեղ առաջին անգամ փորձ է արվում ներկայացնելու անցումային շրջանի բարդ ու հսկայական հիմնահարցերը, ցույց տալու հասարակական-տնտեսական ոլորտի ձեռքբերումներն ու բացթողումները: Հեղինակը ներկայացրել է ագրարային ոլորտում իրականացված վերափոխումները, ցույց տվել ոչ միայն ագրարային վերափոխումների, այլև մասնավորեցման ողջ գործընթացի թերություններն ու առավելությունները, վեր հանել մասնավորեցման գործընթացում տեղ գտած անարդարությունները, բացթողումներն ու սխալները:

Երրորդ հանրապետության տնտեսական քաղաքականության որոշ հարցերի անդրադարձել են տնտեսագետներ Վ. Խոջաբեկյանը²³, Յ. Սարգսյանը²⁴, Ա. Մարկոսյանը²⁵, Ս. Դավիդյանը²⁶, Գ. Ավագյանը²⁷, Զ. Սկրտչյանը²⁸, Թ. Մանասերյանը²⁹, Լ. Անանյանը³⁰ և ուրիշներ:

Անցումային տնտեսություն ունեցող երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում իրականացված տնտեսական վերափոխումներին է նվիրված Գ. Կիրակոսյանի «Անցումային տնտեսության վերափոխումները. տեսության հարցեր» ուսումնասիրությունը, որտեղ ցույց է տրվում ՀՀ տնտեսության հեռանկարային զարգացման միտումները³¹:

Ագրարային քաղաքականության առանձին հարցեր քննարկվում են Զ. Ֆահրադյանի «Ագրարային արմատական վերակառուցումներ Հայաստանի Հանրապետությունում. անհրաժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ» աշխատության մեջ³²: Հեղինակը ագրարային վերափոխումները դիտում է որպես տնտեսության ագրարային հատվածի զարգացման ընդհանուր օրինաչափություն զարգացած և զարգացող երկրների համար: Հիմնախնդրի որոշ հարցերի լուսաբանմանն են նվիրված Զ. Մամիկոնյանի³³, Ն. Մանասերյանի³⁴, Ս. Գաբրիելյանի³⁵, Լ. Ջաքարյանի³⁶ աշխատությունները:

²³ Խոջաբեկյան Վ., Ագրարային քաղաքականությունը և բնակչության տեղաշարժերը, Եր., 1989:

²⁴ Սարգսյան Զ., Տնտեսական քաղաքականությունը Հայաստանում. Պետության դերը, Եր., 2001:

²⁵ Մարկոսյան Ա., Սեփականաշնորհման ու ավափեսականացման գործընթացը. տեսության ու արակտիկայի հարցեր, Եր., 1995:

²⁶ Դավիդյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Զ., Վերափոխումներն անցումային երկրների տնտեսություններում, Եր., 2003:

²⁷ Ավագյան Գ., Հայաստանի տնտեսությունը, անցած ուղին, այսօրը և զարգացման ուրվագիծը, Եր., 1998:

²⁸ Սկրտչյան Զ., Հողային հարաբերությունները և արդի ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 1997:

²⁹ Մանասերյան Թ., Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծեր, Եր., 2000:

³⁰ Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Եր., 2003:

³¹ Կիրակոսյան Գ., Անցումային տնտեսության վերափոխումները. տեսության հարցեր, Եր., 2002:

³² Ֆահրադյան Զ., Ագրարային արմատական վերակառուցումներ Հայաստանի Հանրապետությունում. անհրաժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ, Եր., 2003:

³³ Մամիկոնյան Զ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները, Եր., 1997:

³⁴ Մանասերյան Ն., Ագրարային հարցը երեկ և այսօր, Եր., 2005:

³⁵ Գաբրիելյան Ս., Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001:

³⁶ Ջաքարյան Լ.Ս., Խորհրդահայ գյուղի մայրամուտը, Եր., 2007:

Ե. Սանասերյանին իր «Ագրարային հարցը երեկ և այսօր» աշխատության երկրորդ մասում ներկայացնում է ագրարային ոլորտի արդի հիմնախնդիրները՝ ժամանակակից տարբեր մեկնաբանություններով հանդերձ, իսկ Ս. Գաբրիելյանի «Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը» ազգագրական ուսումնասիրության մեջ դիտարկված են հողային վերափոխումներից և սեփականաշնորհման գործընթացից հետո կատարված հիմնական փոփոխությունները, տնտեսավարման նոր եղանակների ամրագրման հետ կապված բարդությունները և այլն: ՀՀ գյուղատնտեսության արդի վիճակի և զարգացման հեռանկարներին է նվիրված Ա. Գոմցյանի և Ս. Խաչատրյանի «ՀՀ ագրարային ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրները» ուսումնասիրությունը³⁷:

Անցումային տնտեսության հիմնախնդիրներն ուսումնասիրելիս օգտվել ենք մի շարք ռուս գիտնականների հեղինակած աշխատություններից, որոնցում քննարկված են Ռուսաստանի, նաև հետխորհրդային հանրապետությունների տնտեսական զարգացման հետ կապված խնդիրներ³⁸: Դրանց շարքում առանձնացրել ենք Ե.Գայդարի «Государство и эволюция»³⁹, Ա. Իլինի և Ա. Բարսկովի «Крестьянское (фермерское) хозяйство и рынок» աշխատությունները⁴⁰:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՐՈՂԱԿԱՆ ՍԿԶՐԻՆԶՆԵՐԸ: Ուսումնասիրության հիմքում դրված են պատմականության, փաստերի համադրության և իրողությունների վերլուծության պատմահամեմատական և պատմաքննական սկզբունքները: Առաջնորդվելով անկողմնակալության սկզբունքներով՝ փորձել ենք գերծ մնալ ագրարային վերափոխումների հանդեպ ծայրահեղ մոտեցումներից, դրանց նշանակության գերազնահատման միտումից:

ՌՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՂՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և դրական կարծիքով իրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 153 էջ:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը և գիտական կարևորությունը, նպատակն ու խնդիրները, ցույց է տրված աշխատանքի գիտական նորույթը, հստակեցված են հետազոտության ժամանակագրական շրջանակները, տրվել է հիմնախնդրի սկզբնաղբյուրների ու գիտական գրականության տեսությունը:

ԱՐԱՄՏԻՆ ԳԼՈՒԻՆ Լրում է «Հայկական գյուղն ագրարային վերափոխումների նախօրեին» խորագիրը: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից՝ ա. Գյուղատնտեսության վիճակը 1980-ական թթ. և անցումային փուլի

³⁷ Տե՛ս և Գոմցյան Ա., Խաչատրյան Ս., ՀՀ ագրարային ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրները, Եր., 2005:

³⁸ Серова Е., Хромова И., Карлова Н., Тихонова Т., Аграрная реформа в странах с переходной экономикой, М., 2000:

³⁹ Е. Гайдар, Государство и эволюция, Санкт-Петербург, 1997.

⁴⁰ Ильин С., Бабаков А., Крестьянское (фермерское) хозяйство и рынок, М., 1995.

առանձնահատկությունները, բ. Ազրպային քաղաքականության ձևավորումը և վերափոխումների անհրաժեշտությունը:

20-րդ դարի ընթացքում գյուղի զարգացումը Հայաստանում պայմանավորված է եղել բազմաթիվ, հաճախ բավական կարուկ փոփոխություններով: Ըստ այդմ էլ առանձնացել են գյուղի զարգացման հիմնական փուլերը՝ նախախորհրդային, խորհրդային, ետխորհրդային: Խորհրդային պետության գոյության վերջին տասնամյակները և հատկապես 1970-1980-ական թթ. կարելի է առանձնացնել որպես տնտեսական, հասարակական, մշակութային զարգացման հիմնական սկզբունքների լճացման ենթափուլ: Այդ ենթափուլերից յուրաքանչյուրն իր ուրույն դրոշմն է թողել գյուղի զարգացման ընթացքի վրա՝ դառնալով կառուցվածքային փոփոխությունների, սոցիալ-մասնագիտական նոր խմբերի ու ենթախմբերի ձևավորման, զբաղվածության համակարգում կատարված տեղաշարժերի պատճառ: Փոփոխություններից ամենաալիսավորը, որ դիտվել է 20-րդ դարի 50-ական թթ. սկսած, կապված էր հանրապետության բնակչության ընդհանուր թվի մեջ գյուղական բնակչության տեսակարար կշռի նվազման հետ, ինչը բնորոշ էր ոչ միայն Հայաստանին, այլ նաև նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեծ մասին:

1960-70-ական թվականների տնտեսական բարեփոխումները գրեթե ոչ մի արդյունքի չհանգեցրին: Դրա պատճառը ոչ միայն այն էր, որ այդ բարեփոխումները թերի էին և անավարտ մնացին, այլ, որ խորհրդային համակարգը արդեն սպառել էր իր հնարավորությունները: 1980-ական թվականների սկզբին ԽՍՀՄ-ում պահպանվել էին սեփականության նախկին ձևերը, որոնք գյուղում ներկայացված էին համծին պետական, պետական-կոլեկտիվ և անձնական սեփականության: Որպես պետական սեփականություն՝ հանդես էին գալիս խորհունտեսությունները և այլ պետական գյուղատնտեսական ձեռնարկությունները⁴¹:

1980-ական թվականներին խորհրդային հասարակությունը նոր փուլ թևակոխեց: Ճգնաժամային երևույթները աստիճանաբար ընդգրկում էին հասարակական կյանքի բոլոր ոլորտները, սակայն առավել ցայտուն դրանք արտահայտվեցին տնտեսական կյանքում, հատկապես ագրարային ոլորտում:

Վերլուծելով հայկական գյուղի վիճակը, ինչպես նաև ագրարային քաղաքականության էությունը խորհրդային կարգերի օրոք՝ գալիս ենք այն եզրակացության, որ ընդհանուր առմամբ խորհրդային Հայաստանում 60 տարվա ընթացքում գյուղատնտեսությունը չկարողացավ լուծել երկրի պարենային խնդիրը: Տնտեսական համակարգում սկսված ճգնաժամի մյուս կողմն էլ այն էր, որ ունենալով տնտեսական ու տեխնիկական բազա՝ գյուղատնտեսության հանրային հատվածը չկարողացավ ապահովել արտադրության նվազագույն արդյունավետությունն ու արտադրողականությունը:

Հայաստանի գյուղերի համար մեծ չարիք էր «գիզանտոմանիան» կամ խոշորացման քաղաքականությունը: Այդ քաղաքականության հետևանքով վերացան բազմաթիվ փոքր գյուղեր, հատկապես լեռնային գոտիներում: Առանց աշխարհագրական առանձնահատկությունները հաշվի առնելու լեռնային գյուղերին ներկայացվում էին նույն պահանջները: Եվ քանի որ պլանային առաքարանքները չէին կատարվում, այդ գյուղերը համարվեցին ոչ հեռանկարային: «Ոչ հեռանկարային» գյուղի տնտեսությունը միավորում էին

⁴¹ Ջաքարյան Լ.Ս., խորհրդային գյուղի մայրամուտը, էջ 20:

տնտեսապես ավելի զարգացած հարևան գյուղի տնտեսության հետ: Այդ քաղաքականությունը կործանարար եղավ շատ հայկական գյուղերի համար:

Մ.Գորբաչևի ձեռնարկած վերակառուցման քաղաքականությունն էլ, ըստ էության, չլուծեց ագրարային խնդիրը: Այդ բոլորից բացի հանրապետության տնտեսության ագրարային հատվածում ստեղծված ծանր իրավիճակը ավելի ծանրացավ Սպիտակի 1988թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի հետևանքով: Սարկային մեծ կորուստները, հսկայական ավերածությունները մեծ վնաս պատճառեցին Հայաստանի ամբողջ տնտեսությանը, այդ թվում՝ ագրոարդյունաբերական համալիրին, գյուղի արտադրական և սոցիալական ենթակառուցվածքին: Նոր և չափազանց բարդ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ ծագեցին հանրապետության գյուղատնտեսության և գյուղի զարգացման բնագավառում: Երկրաշարժի պատճառած նյութական վնասները հանրապետության նախկին գյուղական 15 շրջաններին (Ամասիայի, Աճիի, Ապարանի, Արագածի, Արթիկի, Ախուրյանի, Գուգարքի, Դուլկասյանի, Կալինինոյի, Նոյեմբերյանի, Սպիտակի, Ստեփանավանի, Թալինի, Թունանյանի և Շանշաղիի) գերազանցում էին 1351 միլիոն ռուբլուց:

Հայաստանի անկախացումը հանրապետության առջև դրեց տնտեսական կյանքի կառուցման այն մոդելի ընտրության անհրաժեշտությունը, որը երկիրը կարող էր տանել համաշխարհային տնտեսական համագործակցությանն ինտեգրվելու ուղիով: Անկախացումից հետո, երբ ստեղծվել էին տնտեսական վերափոխումների առաջին փուլի հիմքերը, երկրի ղեկավարությունը պետք է լուծեր շուկայական ենթակառուցվածքների կազմավորման և համապատասխան միջավայրի ապահովման խնդիրը՝ հաշվի առնելով համաշխարհային և տարածաշրջանային սերտաճման սկզբունքները:

ՀՀ գյուղատնտեսության մեջ արմատական վերափոխումների իրականացումը ենթադրում է տնտեսության կառավարման ձևերի ու մեթոդների, պետության դերի արմատական փոփոխություն: Պետության կողմից իրականացվող ագրարային քաղաքականության տեսանկյունից նրա միջանտությունը պետք է ընդգրկի կարգավորման հետևյալ ոլորտները.

ա. ապահովի ագրոպարենային համալիրում տնտեսության մակրոտնտեսական կայունությունը,

բ. ագրարային շուկայի ձևավորումը իր համապատասխան ենթակառուցվածքներով,

գ. պետական տեսչության մարմինների ձևավորումը, նաև տեխնիկայի անվտանգ օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

դ. անհրաժեշտ օրենքների ընդունումը, մասնավոր-կանավոր կոոպերատիվների, գյուղատնտեսական շուկաների ազատ մրցակցության, հակամենաշնորհային քաղաքականության և որակի վրա հսկման կառուցվածքների ստեղծումը:

Հետիորդիդային շատ պետություններում տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը կազմում էին ագրարային վերափոխումները: Այդպիսի վերափոխումների անհրաժեշտությունը բացատրվում էր երկու հիմնական պատճառներով. նախ՝ ժողովրդական տնտեսության մեջ ագրոարդյունաբերական համալիրի ունեցած կարևոր դերով և նախկինում ձևավորված համակարգի անհամապատասխանությամբ նոր մակրոտնտեսական իրավիճակին, ինչպես նաև արտադրության անարդյունավետությամբ, ապա

սպառման շուկաների կորուստով սոցիալիստական ճանբարի երկրներում, առաջին հերթին՝ ԽՍՀՄ-ում:

Հաշվի առնելով տևական շրջափակման և տնտեսական փլուզման մեջ գտնվող հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ագրարային ոլորտի վճռորոշ ազդեցությունը և ելնելով բնակչության պարենային ասպահովվածության հույժ կարևոր խնդրից՝ գյուղատնտեսությունը մեր երկրում դիտվեց որպես տնտեսության առավել կարևորագույն բնագավառներից մեկը, և 1991թ. հենց սկզբից այս ոլորտից էլ սկսվեց սեփականաշնորհումը՝ նպաստել ունենալով այն դաբձնել շուկայական հարաբերությունները կարգավորող կայուն և արդյունավետ բնագավառ: Անկախ պետականության առաջին մի քանի տարիները գյուղատնտեսության կառավարման պետական գերկենտրոնացված համակարգը հաղթահարող Հայաստանի Հանրապետության համար որոնումների դժվարին շրջան էր՝ կապված տնտեսավարման ու սեփականության ձևերի ընտրության և ճգնաժամային իրավիճակի հետ, որը հնարավոր չէր հաղթահարել առանց պետական կարգավորման, պետության աջակցության ու հովանավորության:

ԵՐԿՐՐՐԴ ԳԼՈՒԽԸ կրում է «Սեփականաշնորհման գործընթացներն ագրարային համակարգում 1990-ական թթ.» խորագիրը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից՝ ա. 3րդի սեփականաշնորհման գործընթացը, բ. Սեփականաշնորհումն անասնապահության ոլորտում, գ. Գյուղտեխնիկայի և այլ արտադրանքների սեփականաշնորհումը:

Ագրարային համակարգում սեփականաշնորհման գործընթացը հանրապետությունում սկսվեց անցումային տնտեսության պայմաններում, հետևաբար վերջինիս առանձնահատկություններն իրենց կնիքը թողեցին ոչ միայն հողի, այլ նաև ագրարային համակարգում իրականացվող վերափոխումների մյուս ոլորտների վրա:

Հայաստանի Հանրապետությունում հողային վերափոխումները ներառում էին հետևյալ ուղղությունները՝ ա. հողի սեփականության նկատմամբ պետական մեծիշխանության վերացում և դրա հետ կապված ողջ համակարգի վերափոխում, բ. հողի սեփականության իրավունքի տրամադրում հանրապետության քաղաքացիներին և նրանց կոլեկտիվներին, գ. պետության սեփականության իրավունքը պահպանել միայն այն հողերի նկատմամբ, որոնց օգտագործումն ունի համապետական հատուկ նշանակություն, դ. կարգավորված ֆինանսական ու հարկային համակարգի ձևավորում, որը կհամապատասխանի նորաստեղծ գյուղատնտեսության համակարգին, ե. գյուղերի աշխատունակ բնակչության զբաղվածության աճի ասպահովում և աշխատանքային ռեսուրսների ռազիոնալ օգտագործում, գ. ագրարային հատվածի կառավարման մեխանիզմների կատարելագործում, է. ագրարային շուկայի ձևավորում և զարգացում, ը. հողի շուկայի ձևավորում և զարգացում և այլն⁴²:

1991թ. հողի սեփականաշնորհումը ՀՀ-ում իրականացվեց՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

1. 3րդը բաժանվեց գյուղի մշտական բնակիչներին՝ ելնելով առկա ընտանիքների քանակից և գյուղի հողային ռեսուրսներից: Այստեղ նկատենք, որ Խոսքը մշակելի հողատարածությունների մասին է: Նշենք, որ մեկ հողաբաժնի չափը յուրաքանչյուր գյուղի համար տարբեր մեծություն կարող էր ունենալ: Հայաստանի յուրաքանչյուր գյուղական ընտանիք սեփականաշնորհման

⁴² Григорян В., Администрация земли в Республике Армения, www.iel.ru

արդյունքում ստացավ միջին հաշվով 1,5 հեկտար գյուղատնտեսական հողատարածք, այդ թվում 1,1 հեկտար վարելահող:

2. Գողանասերի բաժանումը կատարվեց վիճակահանության սկզբունքով՝ ելնելով յուրաքանչյուր ընտանիքում ընդգրկված ժխերի քանակից: Ցանկության դեպքում մի քանի ընտանիք կարող էին հող ստանալ միևնույն դաշտից, որը հետագայում կոյուրացներ դրանց համառոտ աշխատանքների կազմակերպումը:

3. Գողը տրվեց գյուղացուն վճարովի, փոխհատուցումը սահմանվեց երկու տարում, այսպես կոչված կադաստրային գուտ եկամտի 70%-ի չափով, որը հաշվարկված էր ըստ հողերի տեսակների (ոռոգելի, անջրդի, այգի և այլն):

4. Գյուղատնտեսական մշակույթի հողերի 20%-ը միջին հաշվով չսեփակա-նաշնորհվեց նկատի ունենալով գյուղի հետագա զարգացումը: Այդ տարածքները կարող էին տրվել վարձակալությամբ օգտագործելու կամ այլ հանրային կարիքների համար: Շուկայական հարաբերությունների պայմաններում այդ հողերի արդյունավետ օգտագործումը պահանջում էր աճուրդային սկզբունքով դրանց վարձակալում:

5. Նոր օրենսդրությունը թույլատրում է սեփականաշնորհված հողի ազատ տնօրինում նրա տիրոջ կողմից, այդ թվում օտարում, վաճառք, ժառանգելու իրավունք, վարձակալությամբ տալ կամ վերցնել, օրինական այլ գործարքներ կատարել, որոնք նախկինում արգելված էին:

Գողի սեփականաշնորհման ընթացքում եղել են նաև մի շարք կոպիտ սխալներ, մասնավորապես.

Առաջին: Մասնավոր սեփականատիրական հողօգտագործման անցնելը տևական գործընթաց է: Մեր երկրում հողի սեփականաշնորհումը կատարվել է ոչ թե գյուղացիների պահանջով, այլ իշխանության բարձրագույն մարմինների որոշումներով, ընդ որում բոլոր վայրերում այն կատարվել է միևնույն ձևով՝ առանց հաշվի առնելու տարբեր գոտիների առանձնահատկությունները:

Երկրորդ: Սեփականաշնորհման գործընթացում համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չէին գներով հաճախ անցնում էր այն մարդկանց ձեռքը, որոնք քիչ կամ էլ ընդհանրապես մասնակցություն չեն ունեցել դրանց ստեղծմանը: Դա ըստ էության «Նումենկլատուրային» սեփականաշնորհում էր, որի վտանգավորությունը տնտեսական բազմակացութաձևությունը մենաշնորհով փոխարինելու մեջ էր:

Երրորդ թերությունը հողակտորների մանրացումն էր: Նկատի ունենալով, որ ԳՂ-ում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության բաժին է հասնում միջին հաշվով երեք հողակտոր, փաստորեն ներկայումս գյուղատնտեսությունն իրականացվում է ավելի քան 1 մլն փոքր հողակտորների վրա: Նման փոքր, կորական հողակտորներով հնարավոր չէր կազմակերպել արդյունավետ արտադրություն: Նման պայմաններում առաջատար տեխնոլոգիաների կիրառումը, աշխատանքների մեքենայացումը գրեթե անհնար էին: Արտադրված գյուղմթերքների գրեթե 30 % իրացվում էր ասպանքափոխանակության կարգով:

Չորրորդ: Դանրապետության կոմերցիոն բանկերի մեծ մասը ռեսուրսների բացակայության պատճառով գյուղացիական տնտեսություններին վարկեր չէին տրամադրել, իսկ արտոնյալ վարկերի մասին խոսք անգամ լինել չէր կարող: Գյուղատնտեսության բնագավառում վարկավորման լուրջ աշխատանք կատարեց միայն Դայաստանի Գյուղացիական փոխօգնության բանկը:

Սխալներն ու թերություններն, ինչ խոսք, քիչ չէին, սակայն հողի սեփականաշնորհումից հետո ձևավորված գյուղացիական և գյուղացիական

կոլեկտիվ տնտեսությունների գոյությունը, հողի շուկայի, հողային կադաստրի ձևավորումը կարևոր ձեռքբերումներ էին:

Սեփականաշնորհումը չչրջանցեց նաև անասնապահության ոլորտը: Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում անասնաբուծությունն ու անասնապահությունը կարևոր տեղ էին զբաղեցնում, սակայն սեփականաշնորհման և ագրարային վերափոխումների տարիներին ինչպես գյուղատնտեսության այլ հիմնական ճյուղերում, այդ ճյուղում ևս նկատվեց զգալի անկում:

Վերափոխումների 10 տարիների ընթացքում (1991-2000 թթ.) խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 690 հազարից նվազել էր 211,3 հազարով կամ 31,2 %-ով: Առանձնապես վատթար վիճակում հայտնվեցին հանրապետության խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը: Խոզերի գլխաքանակը այդ նույն ժամանակահատվածում 329,3 հազարից իջավ մինչև 67,9 հազարի, իսկ թռչունների՝ 11244,7 հազարից մինչև 2907,4 հազարի կամ նվազեց 3,9 անգամ: Միայն պետական թռչնաբուծական տնտեսություններում և միայն 1992 թ. թռչունների գլխաքանակը կրճատվեց մոտ 18 անգամ⁴³: Գնատնային իրավիճակը անասնաբուծության բնագավառում գնալով խորանում էր:

Ընդհանուր առմամբ Հայաստանում անասնաբուծության զարգացման գործում 1990-ական թվականներին առաջացել էին շատ խնդիրներ և առանց դրանց լուծման դժվար էր ակնկալել որևէ լուրջ արդյունք: Եղած և լուծման կարոտ խնդիրներից էին կերերի արտադրության կայունացումը և կերային բազայի ամրապնդումը, ինչպես նաև անասունների վերադրադրության և տոհմային գործի կազմակերպումը: Միաժամանակ, անասնապահության հետագա զարգացումն էապես պայմանավորված էր լինելու վերանշակող օբյեկտների սեփականաշնորհման ընթացքով ու հետագա գործունեությամբ, ներդրումային ճիշտ քաղաքականության իրականացմամբ: Ընդհանուր առմամբ անասնապահության ճյուղը կարող էր հաջողությամբ զարգանալ կաթնատալարաբուծության, թռչնաբուծության, որոշ չափով խոզաբուծության գծով:

Անասունների սեփականաշնորհումը շատ տեղերում իրականացվեց օրենքի լուրջ խախտումներով, պաշտոնական դիրքի չարաշահումներով և օրինականացվեցին համապատասխան ակտերով:

Շատ գյուղերում սեփականաշնորհումը գլխավորում էին գյուղխորհուրդների և կոլխոզ-սովխոզների ավանդական նախագահները կամ տնօրենները, որոնց ղեկավարությամբ նրանց ընտանեկան կլանները դարձան անասունների, անասնագուների տերեր: Սեփականաշնորհման գործընթացն ուղեկցվում էր հարկային ծանր բեռին առնչվող կեղծ լուրերով, որոնք տազնապ էին առաջացնում հասարակ բնակչության մեջ: Նրանք զանգվածաբար հրաժարվում էին իրենց հասանելիք անասուններից: Ի տարբերություն հողի սեփականաշնորհման, գրեթե բոլոր գյուղերում բավական մեծ էր անասուններից հրաժարվող ընտանիքների տոկոսը:

Անասնագլխաքանակի անարդարացի բաշխման պատճառներից էր հանրապետության տարբեր շրջաններում անասնապահության զարգացման առանձնահատկությունները հաշվի չառնելը: Հատկանշական է, որ հարթավայրային գոտում բազմաթիվ ընտանիքներ չեն ունեցել համապատասխան անասնապահական շինություններ և նաև այդ պատճառով հրաժարվել են անասուններ

⁴³ Տես Ֆահրադյան Հ., նշվ. աշխ., էջ 165:

վերցնելուց: Անասնապահական շինությունների հետ կապված բարդություններ արձանագրվել են նախալեռնային ու լեռնային գոտիների գյուղերում: Փաստորեն այս և բազմաթիվ այլ առանձնահատկություններ հաշվի չառնելու պատճառով կատարվեց անասնազվաքանակի մեծ մասի կենտրոնացում մեկ կամ մի քանի հոգու ձեռքում: Սկզբնական շրջանում դանդաղ էր ընթանում գյուղատնտեսությանը սպասարկող, մատակարարող, գյուղատնտեսական մթերքերն մթերող և վերանշակող օղակների՝ այլ խոսքով, ագրոպարենային համալիրի սեփականաշնորհումը, սակայն սկսած 1995 թվականից՝ նշված կառույցների սպասարկման աշխատանքները և սեփականաշնորհման գործընթացը համեմատաբար արագ ընթացավ:

Անդրադառնալով գյուղտեխնիկայի և գյուղատնտեսական այլ արտադրամիջոցների սեփականաշնորհմանը՝ նշենք, որ գյուղացիական տնտեսություններում հատկապես դժվար էր լուծվում արտադրական գործընթացների մեթոդաչափման խնդիրը: Եղած հին տեխնիկան գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի պայմաններում ի վիճակի էր կատարելու միայն վարի, կամ լավագույն դեպքում հնձի և այգիների բուժման աշխատանքներ: Տեխնիկա չունեցող գյուղացիական տնտեսությունների համար սպասարկման տեսակետից կարևոր էր «Հայագրոսպասարկում» և «Հայբերրիություն» արտադրական միավորումներին կից գյուղմեքենաների շահագործման կայանների ստեղծումը⁴⁴: Հատկանշական է, որ սեփականաշնորհման սկզբնական փուլում գյուղատնտեսական մեքենաների, սարքավորումների և այլ արտադրամիջոցների զգալի մասը պետք է հանձնվեր տեղական խորհուրդներին՝ գյուղացիական տնտեսություններին սպասարկելու նպատակով: Ըստ հաճախ գյուղտեխնիկայի առանձին մասեր վաճառվում էին թանկ գներով, իսկ տեխնիկան վերածվում էր թափոնի: Գյուղտեխնիկայի բազայի փոշիացումը մեծ հարված հասցրեց գյուղացիական արտադրությանը: Գյուղում տեխնիկան կենտրոնացվեց առանձին մարդկանց ձեռքում, որոնք այնպիսի գներ էին առաջարկում, որ գյուղացին հնարավորություն չէր ունենում մշակել իր հողը: Հանրապետությունում չկար նույնիսկ պարզունակ գյուղգործիքների կազմակերպված զանգվածային արտադրություն: Ըստ սեփականաշնորհման սկզբունքի, սեփականացնելու առաջնաերթ իրավունք ունեին տեխնիկան աշխատեցնողները: Հենց նրանք էլ դարձան գյուղտեխնիկայի սեփականատերերը: Անհրաժեշտ է նշել, որ դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ այդ տարիներին փախստականները վճարունակ չէին, իսկ նրանք, ովքեր նվազագույն հնարավորություն ունեին, շտապում էին օր առաջ քաղաք տեղափոխվել, անգամ արտերկիր: Այսպես, փախստականներով բնակեցված գյուղերի մեծ մասը զրկվեց գյուղտեխնիկայից:

ԵՐԻՐԴ ԳԼԻՒԸ կրում է «Ագրարային համակարգում իրականացված վերափոխությունների հետևանքները և արդյունքները» խորագիրը, որտեղ քննության են առնված ա. Հողի սեփականաշնորհման հետևանքները, բ. Անասնապահության ոլորտի և գյուղատնտեսական արտադրամիջոցների սեփականաշնորհման հետևանքները, գ. ՀՀ-ում իրագործված ագրարային վերափոխումների հանրազումարները:

⁴⁴ Տե՛ս Սկրտչյան Հ., Հողային հարաբերությունները և արդի ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ-ում, էջ 18:

Հողի սեփականաշնորհումն ուներ ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ: Որպես *դրական հետևանք* նշենք, որ

1. Հողի սեփականաշնորհումը տնտեսական ճգնաժամի պայմաններում գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով, մեղմեց սովի առաջացման հնարավորությունը, նկատելիորեն մեծացավ գյուղացիների նյութական շահագործվածությունը, նոր հիմունքներով կազմակերպվեց արտադրությունն ու գյուղական կյանքը:

2. Հողի սեփականաշնորհմամբ հաղթահարվեց հողի սեփականության պետական մենաշնորհը և սկիզբ դրվեց հողային նոր համակարգի ձևավորմանը: Հողի սեփականաշնորհման հետևանքով հանրապետության բնակչության զգալի մասը դարձավ հողի սեփականատեր⁴⁵: Այն տրվեց գյուղի բոլոր նշտական բնակիչներին (որոշ դեպքերում նաև քաղաքաբնակ նախկին գյուղացիներին), սակայն այդ երևույթն ունի ընդհանուր առմամբ հակասական բնույթ. մի կողմից՝ հողը տրվեց այնպիսի մարդկանց, ովքեր անհայտորեն ավանդական գյուղացի չէին և չէին կարող բավարար արդյունավետությամբ օգտագործել հողը: Մյուս կողմից, սակայն, հողի հավասար բաժանումը հավասար մրցակցության մեկնարկային պայմաններ էր ստեղծում, որը հետագայում կարող էր հանգեցնել լավագույն հողօգտագործողների ի հայտ գալուն:

3. Հողի սեփականաշնորհման հետևանքով նոր հիմունքներով կազմակերպվեց արտադրությունն ու գյուղական կյանքը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսություններն այլևս հարկադրված չէին կատարել պլանային աշխատանք: Բացի այդ, հողի սեփականաշնորհման օրենքի կիրառումով զգալիորեն ավելացավ գյուղական բնակչությունը:

4. Հողի սեփականաշնորհումը նպաստում էր նաև գյուղական բնակչության զբաղվածության աճին: Օրինակ, 1980-ական թթ. վերջին Հայաստանում գյուղատնտեսության մեջ զբաղված էր 275 հազար մարդ, իսկ 1990-ական թթ. սկզբներին, սեփականաշնորհումից հետո, այդ թիվը սկսեց աճել: 1991-1998 թթ. գյուղատնտեսության մեջ ներգրավված էին 567,8 հազար մարդ: Կարելի է եզրակացնել, որ հողային վերափոխումները նպաստեցին տնտեսական շրջանառության մեջ ազատ աշխատուժի հոսքին:

5. Հողի սեփականաշնորհման կարևոր արդյունքներից էր նախկին կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարումը: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2000 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին (ընդհանուր թիվը՝ 332608) հատկացված գյուղատնտեսական հողահանդակների մակերեսը, ներառյալ և տնամերձ տարածությունները, հավասար էր 460405 հեկտարի, որից 353727 հեկտարը՝ վարելահող, 39080 հեկտարը՝ բազմամյա տնկարկ, 67598 հեկտարը՝ մարգագետին⁴⁶:

320 հազարից ավելի անհատական տնտեսություններին իրեն սեփականություն փոխանցվեց հողերի 66%-ը⁴⁷: Արտավայրերը՝ գյուղատնտեսական հողերի մոտ 50%-ը չմասնավորվեցին և անցան համայնքներին⁴⁸:

⁴⁵ Տես նույն տեղում, էջ 14:

⁴⁶ Նույն տեղում, էջ 142:

⁴⁷ Տես Սիմայան Է., նշվ. աշխ., էջ 81:

⁴⁸ Տես Գոմցյան Ա., հաջատրյան Ա., նշվ. աշխ., էջ 15:

6. Սեփականաշնորհման հետևանքով հանրապետությունում ձևավորվեց *տոցիստոնտեսական ճոր կառուցվածք*, որտեղ գերակշռող դերը պատկանում էր անհատական գյուղացիական տնտեսություններին, ընդ որում նրանց սեփականաշնորհվեցին ոչ միայն հողերը, այլ նաև անասունները, տեխնիկան, այլ հիմնական միջոցները⁴⁹:

Դրական համարվելով հողի մասնավոր սեփականության գաղափարը և դրա իրականացումը՝ նշելով, որ այդ վերափոխումների ընթացքում թույլ են տրվել մի շարք կոպիտ սխալներ ու բացթողումներ, որոնք, ի վերջո, բացասական ազդեցություն ունեցան ԳՂ ագրոսպրենային համակարգի զարգացման վրա: Դրոյի արագընթաց սեփականաշնորհումը դրական էր միայն այն իմաստով, որ միանգամից վերացրեց համայնակարական ագրարային ցածր արդյունավետ համակարգը: Արագ սեփականաշնորհումը, սակայն, վերացրեց նախորդ տնտեսակարգի ոչ միայն բացասական, այլ նաև դրական կողմերը:

Հողի սեփականաշնորհումը ունեցավ նաև մի շարք *բացասական հետևանքներ*, որոնք պայմանավորված էին սեփականաշնորհման ընթացքում տեղ գտած թերություններով և սխալներով, որոնք սկսել էին արտահայտվել դեռևս դրա իրականացման վաղ փուլում՝ 1991-1992 թթ.: Ագրարային վերափոխումների որոշ ոլորտներում տեղ գտած բացասական երևույթների պատճառը սեփականաշնորհումն իրագործող վարչակարգը բացատրելու էր երկրի էներգետիկ ճգնաժամով, շրջափակմամբ և այլ «հիմնավորումներով», բայց ոչ երբեք սեփական անկարողությամբ: Սակավահող հանրապետությունում հողի արհեստականորեն արագացված սեփականաշնորհման արդյունքները (2000 թ. դրությամբ) չէին համապատասխանում ոչ պարենամթերքով ազգաբնակչությանն ապահովելու, ոչ էլ հողը արդյունավետ վարելու և գյուղացու առօրյա կարիքները բավարարելու պահանջներին:

Հողի սեփականաշնորհման բացասական հետևանքներն էին.

1. Հորը գյուղացուն հանձնելուց հետո պետությունը մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան միայնակ իր հոգսերի հետ: Ագրարային ճգնաժամի պայմաններում դա մեծագույն սխալ էր, քանի որ այդ ճգնաժամը հաղթահարելու համար պետությունը պետք է ակտիվ հովանավորչական գործունեություն ծավալեր գյուղատնտեսության բնագավառում: Անցման շրջանում թերազնահատվեց պետության կարգավորիչ դերը: Պետության սուղ միջոցները, արտաքին աշխարհի նյութական ու ֆինանսական օգնությունը հիմնականում օգտագործվեցին ոչ թե գյուղատնտեսության զարգացման, այլ պարենի ներմուծման համար: Ագրարային ճգնաժամի հաղթահարումը պահանջում էր պետության գործունե հովանավորություն գյուղատնտեսությանը, ֆինանսական և վարկային պետական աջակցություն: Մինչև 2000 թվականը այդ ուղղությամբ կատարվել էր անբավարար աշխատանք:

2. Հողի սեփականաշնորհումը կատարվեց համատարած, այլ ոչ թե մաս-մաս: Շրջափակման ու պատերազմի պայմաններում ճիշտ կլիներ ժամանակավորապես պահպանել կոլեկտիվ տնտեսությունները, որոնք տվյալ պարագայում շահութաբեր էին ու կարող էին ապահովել բարձր արտադրողականություն, ինչպես արվեց մյուս հանրապետություններում (որտեղ դրանք մինչև այժմ պահպանվում են):

⁴⁹ Բարաջանյան Մ., Հակոբյան Գ., ԳՂ գյուղատնտեսության ներկայիս տնտեսական արդյունավետության հարցի շուրջ, «Եկոնոմիկա», Եր., 1996, № 10-12, էջ 64:

3. Հացահատիկային մշակաբույսերը պետք է անցցվեին միայն այնտեղ, որտեղ կային վարելու նախապայմաններ՝ Շիրակի հարթավայր, նախալեռնային գոտի: Այդ վայրերում հնարավոր էր բերքատվությունը հասցնել 50 և ավելի ցեներների:

4. Սեփականաշնորհման հետևանքով առաջացած հողի որոշակի մասնատվածությունը հարկադրում էր այն մշակել հին եղանակով, հիմնականում ձեռքով՝ զրեթե բացառելով գյուղատնտեսական որևէ տեխնիկայի կիրառումը:

5. Սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված անարդարությունների և կոպիտ սխալների հետևանքով, նաև սեփականաշնորհված հողերի անհավասար պտղաբերության պատճառով գյուղական բնակչության մի մասը ստիպված եղավ գաղթել քաղաքներ՝ աշխատանք փնտրելու՝ համալրելով գործազուրկների բանակը:

6. Կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարման հետևանքով հանրապետության մշակովի հողակտորներն ավելի մանրատվեցին: Յուրաքանչյուր տնտեսությանը միջին հաշվով հասոկացվեց համապատասխանաբար 1,3 և 1,5 հա հողաբաժին⁵⁰: Առավել բնակեցված և պտղաբեր շրջաններում (Արարատյան դաշտ) տնտեսության միջին հողատարածքը 0,75 հա էր, իսկ երկրի հյուսիս-արևելքում և հարավ-արևելքում՝ 2,5 հա-ից մի քիչ ավելի⁵¹:

Սեփականաշնորհումը, որի ժամանակ հաշվի չառնվեցին գյուղական բնակչության տեղական պահանջներն ու առանձնահատկությունները, ուղղակի ազդեցություն ունեցավ և արդեն 1991 թ. սահմանափակեց բազմաթիվ ընտանիքների տնտեսական հնարավորությունները: Օրինակ, Արարատյան դաշտի գյուղերում, որտեղ երիտասարդության տեսակարար կշիռն ավելի մեծ էր, ընտանիքն ստացավ մի քանի անգամ փոքր հողակտոր, քան այլ գոտիներում: Հաշվարկը մեկ շնչի հաշվով կատարելու դեպքում տարբերություններն ավելի ցցուն են դառնում:

7. Գյուղատնտեսական արտադրության մանրատումը և մասնագիտական կազմավորումն ամենուրեք հանգեցրեց արտադրության տեխնոլոգիաների լուրջ խախտումների, բույսերի և կենդանիների հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի կանխարգելիչ և բուժման աշխատանքների բարձրորդի վիճակի, որը հղի էր անկախատեսելի հետևանքներով:

Արտադրության անմիջական անկման հետ մեկտեղ, խոր ճգնաժամ ապրեցին գյուղատնտեսության գիտական բազան, նրա գեներֆոնդի վերարտադրությունը: Սեփականաշնորհման նախօրյակին Հայաստանում գործում էին 65 տոհմային անասնաբուծական և թռչնաբուծական տնտեսություններ, որոնցից 38-ը տավարաբուծության և 19-ը ոչխարաբուծության բնագավառում: Դրանց սեփականաշնորհումից հետո մնացել էր համապատասխանաբար 5 և 2 տնտեսություն⁵²:

Սեփականաշնորհումից հետո յուրաքանչյուր ֆերմերային տնտեսությանը միջին հաշվով բաժին էր ընկնում 1,6 գլուխ խոշոր անասուն, 1,7 գլուխ ոչխար և յուրաքանչյուր 5 ֆերմերային տնտեսությանը 1 գլուխ խոզ: 1991-1992թթ. գյուղացիական տնտեսությունների ձևավորումից հետո նրանց սեփականաշնորհվեց 63326 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, դրանցից 23426-ը՝ կով,

⁵⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 171:

⁵¹ Տե՛ս նույն տեղում:

⁵² Տե՛ս Մասնատրանս և, Ազրարային հարցը երեկ և այսօր, էջ 102:

260998 գլուխ ոչխար և այծ, իսկ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին՝ 143861 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից 48526-ը՝ կով, 180726 ոչխար և այծ: Պետք է նշել, որ շատ դեպքերում անասնապահության սեփականաշնորհման հետևանքները կախված էին նաև դրա իրականացման ընթացքից և ոլորտի պատասխանատուների գործունեությունից: Անասնա-գլխաքանակի սեփականաշնորհումը և հանրային անասնապահական հիմնա-լիքների կազմավորումը նույն օրվանից բացառեցին տարրական տեխնո-լոգիաների կիրառումը, տոհմային անասնաբուծական գենֆոնդի պահպանումն ու զարգացումը, կերպուտադրության և անասունների կերակրման գիտական պահանջները:

Ազդարային արմատական վերակառուցումների առաջին երեք տարիներին գյուղատնտեսական մեքենատրակտորային հավաքակալայանների լուծարման պատճառով վերացավ գյուղատնտեսական տեխնիկական ապաստրկման միաս-նական, կենտրոնացված համակարգը, լուծարվեց ճյուղի ժամանակակից տեխնիկական բազան, որի հետևանքով մեքենայացված և ինտենսիվ գյուղատնտեսությունն իր տեղը գիջեց ձեռքի աշխատանքի վրա հիմնված էքստենսիվ գյուղատնտեսությանը⁵³: Գյուղատնտեսության մեջ շահագործվող մեքենատրակտորային հավաքակազմի շուրջ 90 տոկոսն էլ օգտագործվում էր նորմատիվային ժամկետից 10-15 տարով ավելի⁵⁴:

Սեփականաշնորհման ընթացքում մասնավորեցվին հանրապետության ազրո-արդյունաբերական համալիրում եղած վերանորոգման արհեստանոցների 52840 քառակուսի մետր օգտակար տարածքից 1682-ը, 6373 տոննա արտադրական կարողության կերպտեխնոլոգիայից և կերպուտադրամատերից՝ 930-ը, 52945 տոննա կարտոֆիլի, բանջարեղենի և մրգեղենի միանվագ պահպանման պահեստարան սառնարաններից՝ 16530-ը, 5054 հանդերձարան-տեղով գյուղական բաղնիքներից՝ 1116-ը: Այդ ամենից բացի, այդ նույն ժամանակահատվածում հանրապետությունում եղած 931 կերահավաք կոմբայներից սեփականաշնորհվեցին 450-ը, միջինը մոտ 9762 ռուբլով, 4865 տրակտորային գույքաներից՝ 2602-ը՝ մոտ 447 ռուբլի միջին գնով, 2344 սերմնացան մեքենաներից՝ 1176-ը՝ մոտ 1163 ռուբլի միջին գնով⁵⁵: Եթե նկատի ունենանք նաև այդ տարիներին ռուբլու արժեզրկումը, ապա բերած թվերից դժվար չէ կրահել, որ սեփականաշնորհված արտադրական ռեսուրսներն իրացվել են դրանց իրական արժեքը չարտահայտող բավականին ցածր գներով: Սյուս կողմից՝ բերված թվերից երևում է, որ հանրապետության հանրային գյուղատնտեսության հիմնական ֆոնդերի ավելի քան երկու երրորդը այդ տարիներին (1991-1994 թթ.) չի սեփականաշնորհվել: Գիշտ է, չսեփակա-նաշնորհված հիմնական միջոցների մի մասը մնում էր դեռևս պահպանվող պետական տնտեսություններում և օգտագործվում էր դրանց կողմից, մի մասն էլ անդացվեց գյուղական խորհուրդներին՝ նորաստեղծ գյուղացիական տնտե-սություններին սպասարկելու նպատակով, այնուամենայնիվ հազարավոր շենքեր, շինություններ, արհեստանոցներ, մեքենահավաքակալայաններ, պահեստներ, կերպտեխնոլոգիաներ, կերպուտադրամատեր և այլն մնացել էին չսեփականաշնորհված և հետագայում թալանվեցին: Դրանց զգալի մասը

⁵³ Տե՛ս Մանասերյան Ն., նշվ. աշխ., էջ 111:

⁵⁴ Տե՛ս Սովիսիյան Վ., Գողի ճակատագրով, Մտորումներ տքնության, էջ 248:

⁵⁵ Տե՛ս Ֆահրադյան Հ., նշվ. աշխ., էջ 142:

գյուղատնտեսական արտադրության մեջ այլևս չօգտագործվեց: Գյուղատնտեսության արտադրամիջոցների սեփականաշնորհումն իր ազդեցությունն էր թողնում գյուղմթերքների արտադրության և իրացման ցուցանիշների վրա, ինչպես և սերտորեն առնչվում էր արտադրատեխնիկական սպասարկման խնդրին:

Ագրարային վերափոխումների արդյունքների գնահատումը ևս բավական բարդ գործընթաց է: Դժվար է տալ միատեսակ դրական կամ բացասական գնահատական: Այս առումով դրական է, որ ագրարային վերափոխումներ իրականացնող երկրների համար Զամաշխարհային բանկը մշակել է գնահատման հատուկ մեթոդ: Չնայած այդ մեթոդը ևս խիստ պայմանական է՝ նկատի ունենալով ագրարային վերափոխում իրականացնող երկրի տեղական առանձնահատկությունները, սակայն ընդհանուր առմամբ դրա կիրառումը թույլ է տալիս տեսնել իրականացված վերափոխումների ընդհանուր պատկերը: Զանաձայն Զամաշխարհային բանկի այդ մեթոդի, վերափոխումների արդյունքները գնահատվում են 1-10 սանդակով և այդ գնահատումն իրականացնելիս հաշվի են առնվում մի շարք ոլորտներ, ինչպիսիք են՝

- ա. շուկայի ազատականացումը,
- բ. հողային մեֆորմը,
- գ. սեփականաշնորհումը,
- դ. գյուղացիական տնտեսություններին տրվող վարկերը,
- ե. ենթակառուցվածքները⁵⁶:

ՀՀ-ն իրականացրած ագրարային վերակառուցումների արդյունքների գնահատման հիման վրա ստացել է 7 միավոր, այսինքն մեր երկրում առկա են բոլոր դրական չափորոշիչները: Այլ խոսքով, ՀՀ-ում առկա են ազատ շուկաները, ձևավորվել է բավականաչափ ազատ առևտրային քաղաքականություն, բայց դեռևս ներքին շուկան լիովին զարգացած չէ: Բացի այդ, հողը սեփականաշնորհված է, սակայն պարզաստ չեն մասնավորեցման հետ կապված գրանցումային փաստաթղթերը, հողի շուկան ձևավորված չէ ամբողջությամբ, սեփականաշնորհումն իրականացված է գյուղատնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, առաջացել են նաև գյուղատնտեսության վարկավորման կազմակերպությունները:

Եզրակացությունում հանրագումարի են բերված աստեղագիտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

ՀՀ-ում 1991-2000 թթ. կայացած ագրարային վերափոխումների արդյունքները ընդհանուր առմամբ խիստ հակասական են, սակայն դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Անկախության հռչակումից հետո Զայաստանի Զանրապետությունում իրականացվեցին արմատական վերափոխումներ, կատարվեցին համակարգային փոփոխություններ և պայմաններ ստեղծվեցին շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսության ձևավորման համար:

2. Վերափոխումների շնորհիվ է, որ ներկայումս ագրոսպորենային ոլորտում ձևավորված է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է ավելի քան 333 հազար գյուղացիական տնտեսություն: Զանրապետության գյուղատնտեսական ար-

⁵⁶ Стів Сорова Е., Храмова И., Карлова Н., Тухоньва Т., указ. соч., с. 26:

տաղիության մեջ հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են:

3. Սեփականաշնորհման գործընթացը, որը ագրարային վերափոխումների կարևոր հատվածներից մեկն էր, ՀՀ-ում սկսվեց հողից: Ժամանակին Հայաստանի իշխանավոր-վերափոխիչներն առանց լուրջ նախապատրաստվելու, հաշվառելու և գնահատելու իրականացրին հողի սեփականաշնորհումը՝ լուծարելով անգամ նախկինում բարձր արդյունավետությամբ գործող տնտեսությունները, ինչն էլ պատճառ դարձավ գյուղում ձևավորված արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների մասնատման ու փոշիացման:

4. Հողի սեփականաշնորհումը հանրապետությունում իրականացվեց շատ կարճ ժամանակահատվածում՝ 1991-1993 թթ., որն էլ պատճառ դարձավ, որ իշխանությունները չհասցնեն մշակել բավականաչափ զարգացած համապատասխան օրենսդրական դաշտ՝ միտված հողի հանդեպ սեփականության իրավունքի ամրագրմանը, հողի ռացիոնալ օգտագործմանը և այլն: Արդյունքում ՀՀ գյուղատնտեսությունը տրոհվեց բազմաթիվ մանր անհատական տնտեսությունների (մոտ 320 հազար), որոնք զարգացում չստացան:

5. Հողի սեփականաշնորհման ազդեցությունը դրական էր միայն այն իմաստով, որ նպաստեց գյուղական բնակավայրերում զանգվածային աղքատության հաղթահարմանը, սակայն գյուղատնտեսական արտադրության, գյուղմթերքների իրացման արդյունավետությունը բարձրացնելու համար պետությունը պետք է իրականացներ հետագա վերափոխումներ: Այդ ոլորտում, սակայն, բացթողումները բավական շատ էին:

6. Անանապահության և գյուղատնտեսական մեքենաների բնագավառում սեփականաշնորհման անվան տակ համատարած թալանվեցին տասնամյակներով ստեղծված ֆերմաներն ու տեխնիկան՝ ընդ որում մեծ մասամբ հայտնվելով գյուղատնտեսության հետ կապ չունեցող մարդկանց ձեռքում:

7. ՀՀ-ում սեփականաշնորհման ծրագիրը միտված էր տնտեսական հարաբերություններում պետական միջամտության նվազմանը և մրցունակ տնտեսական դաշտի ձևավորմանը, ինչը սեփականաշնորհման սկզբնական փուլում իրականություն չդարձավ:

8. Սեփականաշնորհման հետևանքով զրկվելով անասուններից, գյուղտեխնիկայից, պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման հնարավորություններից՝ գյուղացին մնաց մենակ իր փոքր հողակտորի հետ՝ հույսը դնելով ձեռքի անարդյունավետ աշխատանքի վրա: Հողը բաժանելով գյուղացուն պետությունն իր խնդիրը համարեց ավարտված: 1990-ական թթ. վերջերին առանձին որոշումներով փորձեր արվեցին շտկելու այդ սխալները, սակայն այդ միջոցառումները ոչինչ չտվեցին:

9. Նկատելի, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում (1991-2000 թթ.) սեփականաշնորհման գործընթացը ըստ տարիների կրել է զգալի փոփոխություններ: Սեփականաշնորհման տեմպերն ավելի արագ էին 1996-1997 թթ. կապված սեփականաշնորհման սերտիֆիկատների տրամադրման հետ, ինչը սկզբնական փուլում բարձրացրեց բնակչության տնտեսական ակտիվությունը, սակայն այն հետագայում էական նշանակություն չունեցավ:

10. Ագրարային վերափոխումները նպաստեցին պատերազմի և տնտեսական շրջափակման մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության գոյատևմանը: 1990-ական թթ. սկզբներին տնտեսական սուր ճգնաժամի պայմաններում արդյունաբերական աշխատազուրկ բանվորների մի մասը աշխատանքի անցավ

գյուղատնտեսության ոլորտում: Հողի սեփականաշնորհման առաջին տարիներին գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատավորների թիվը անց 200 հազարով, իսկ 1990-2000 թթ. ընթացքում ընդհանուր առմամբ ավելացավ 280 հազարով:

11. Ագրարային վերափոխումները մեր երկրում ունեցան ավելի արմատական բնույթ և դրանով իրենց կնիքը դրեցին ՀՀ նորագույն պատմության վրա: Այդ վերափոխումները չլուծեցին գյուղատնտեսության առջև ծառայած բոլոր խնդիրները, բայց հետագա մի քանի տարիներին արդեն ստեղծված տնտեսական հիմքերի վրակայունացրին ոլորտը:

Բնութագրելով ՀՀ ագրարային ոլորտի արդի վիճակը՝ կարելի է փաստել, որ վերջին տարիներին նկատելի են բնագավառի զարգացման կայուն միտումներ: Դրա հետ մեկտեղ Հայաստանի ագրարային ոլորտը շարունակում է մնալ բավականին խոցելի. դա հիմնականում պայմանավորված է հարաբերական ասկավահողությամբ, սակավաշրոթյամբ, հողի մասնավորեցումից հետո ձևավորված տնտեսությունների փոքր չափերով ու դրանց մասնատվածությամբ, արտադրական, շուկայական և սոցիալական ենթակառուցվածքների թերզարգացվածությամբ և շուկայական տնտեսության պայմաններին անհամապատասխանությամբ:

Չնայած ՀՀ-ում 1991-2000 թթ. իրականացված ագրարային վերափոխումները դրական արդյունքների հետ մեկտեղ թողեցին բացասական հետևանքեր ոչ միայն տնտեսության, այլ նաև սոցիալական ու քաղաքական ոլորտներում, սակայն դրանց իրականացումը պատմական անհրաժեշտություն էր պայմանավորված ժամանակի քաղաքական և տնտեսական առանձնահատկություններով:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Հողի սեփականաշնորհման ընթացքն ու արդյունքները ՀՀ-ում, «Կանթեղ» գիտական հոդվածներ ժողովածու, Երևան, 2008, № 3 (36), էջ 171-178:
2. Ագրարային քաղաքականության հիմքերի ձևավորումը ՀՀ-ում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2009, № 1 (624), էջ 67-72:
3. ՀՀ ագրարային համակարգում իրականացված վերափոխումների արդյունքները, Կոթությունը և գիտությունը Արցախում, Եր., 2010, № 1-2, էջ 137-144:

ГЕВОРГЯН МАРИНА ГРИГОРЬЕВНА

АГРАРНЫЕ РЕФОРМЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 1991-2000 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01-История Армении

Защита состоится 30 сентября 2011 г. в 14⁰⁰ по адресу г. Ереван, пр. М. Баграмяна 24/4 на заседании специализированного совета 004 при Институте Истории НАН РА.

РЕЗЮМЕ

Исследование аграрных реформ третьей Республики Армения имеет важное научное и общественное значение. С точки зрения новейшей истории Армении наиболее важное значение придается особенностям переходного периода в сельском хозяйстве, необходимости аграрных реформ, приватизация земли, поголовья скота, сельскохозяйственной техники, и новое освещение их результатов.

Во введении обоснована актуальность изучаемой темы, хронологические рамки исследуемой темы, научное новшество, дана краткая оценка источниковедческой базы и истории вопроса.

Основная цель диссертации – посредством всестороннего изучения архивных документов, документальных материалов в современной периодике, опубликованных в научных сборниках, статей, ценных исторических и экономических трудов, разнообразных мемуаров, обнаружить и целостно представить процесс и последствия аграрных реформ.

Проделанную работу как новшество можно оценить в следующих аспектах:

1. Сопоставляя многочисленные архивные материалы, национальные статистические данные всестороннему анализу подвергается аграрные реформы, осуществленные в РА в 1990-е гг.

2. В диссертации проделана попытка представить направления аграрной политики тех режим, которые осуществляли реформы 1991-2000 гг., их недостатки и преимущества.

В первой главе представлены особенности переходного периода в сельском хозяйстве, формирование аграрной политики и необходимость аграрных реформ. Подробно проанализированы положительные и отрицательные стороны советской аграрной системы и их влияние на армянскую деревню. Прежде всего внимание было уделено анализу экономического положения в недавно получившей независимость Республике Армения. Были подняты вопросы особенностей переходной экономики и освещены некоторые направления аграрной политики властей РА.

В 1980-е годы советское армянское общество перешло в новую фазу. Кризисные явления постепенно охватывали все сферы общественной

жизни, однако наиболее ярко они отразились в экономической жизни, в особенности в аграрной сфере.

Анализируя состояние в армянской деревне, а также сущность аграрной политики при советском режиме, нужно отметить, что в целом сельское хозяйство Советской Армении отличалось односторонним развитием, речь в частности идет о земледелии. Дело в том, что за 60 лет сельское хозяйство не смогло решить продуктивную задачу страны.

Осуществление коренных реформ в сельском хозяйстве РА предполагает изменение форм и методов управления экономикой, роли государства. С точки зрения осуществляемой государством аграрной политики его вмешательство должно охватывать следующие сферы регулирования:

- а) обеспечить макроэкономическую стабильность экономики в агропродовольственном комплексе,
- б) формирование аграрного рынка с соответствующими инфраструктурами,
- в) формирование органов государственной инспекции, а также осуществление контроля над безопасным использованием техники,
- г) принятие необходимых решений, создание частных кооперативов, свободной конкуренции сельскохозяйственных рынков, антимонопольной политики и контроля за качеством.

Во многих постсоветских государствах составной частью экономической политики являются аграрные реформы. Необходимость в таких реформах объясняется двумя основными причинами, прежде всего – важной ролью агрокомплекса в народном хозяйстве и несоответствием ранее сформированной системы новой макроэкономической ситуации, а также эффективностью производства, потерей рынков сбыта в странах социалистического лагеря, в первую очередь – в СССР.

Вторая глава труда под названием «Процесс приватизации в аграрной системе в 1990-е гг.» посвящена процессам приватизации земли, сельскохозяйственных животных, строений сельскохозяйственного назначения. На богатой источниковедческой базе поднимается вопрос о несправедливостях и недостатках, имевших место во время приватизации.

В третьей главе представлены последствия приватизации, проведенной по областям. Рассмотрены положительные стороны, имевшие место во время приватизации и влияние отрицательных последствий на развитие экономики РА. Здесь дается оценка также аграрным реформам, осуществленным за десятилетний период.

В заключении нашли место основные положения, выводы и заключения диссертации.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных материалов и литературы. Общий объем работы составляет 153 страниц компьютерного набора.

GEVORGYAN MARINE GRIGOR

AGRARIAN REFORMS IN THE REPUBLIC OF ARMENIA 1991-2000

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on 30 September 2011, 14⁰⁰ in the Specialized Council № 004, operating at the Institute of History of National Academy of Sciences of RA (on the address Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The study of agrarian reforms of the third Republic of Armenia has important scientific and social value. From the viewpoint of the modern Armenian history the major significance is given to the peculiarities of the transition period in the agriculture, the need for agrarian reforms, privatization of land, cattle head, agricultural equipment, and the new illumination of their results.

In the introduction the importance of studied theme, the chronological borders of the research, scientific innovations are explained, the brief theory of source base and the history of the issue is given.

The main purpose of the dissertation is to find out and comprehensively present the process and the consequences of agrarian reforms through the detailed study of archive documents, documental materials in modern press, published scientific articles, valuable historical and economical works and various memoirs.

The work completed can be valued as an innovation in the following senses:

1. Comparing numerous archive materials, national statistical data, to give a comprehensive analysis to the agrarian reforms implemented in RA in 1990s, which have not been studied in a complete scientific manner.

2. The dissertation makes attempts to present the directions of agrarian policy implemented by the regimes, which made the reforms in 1991-2000, their shortcomings and advantages.

The first chapter is dedicated to the peculiarities of the transition period in agriculture, the formation of agrarian policy and the need for agrarian reforms. The detailed analysis is given to positive and negative sides of soviet agrarian system and their influence on the Armenian countryside. Studying in details the Soviet agrarian system, the policy held by Armenian Communist Party is criticized. But, first of all, the attention was paid to the analysis of independent Republic of Armenia. The peculiarities of transition economy in agriculture were brought into light, the decisive direction of agrarian policy implemented by RA authorities were illuminated.

In the 1980s, the Armenian Soviet Society entered a new stage. The crisis phenomena step by step have penetrated into all the spheres of the public life, but most considerably they have been expressed in the economic life, especially in the agrarian sphere.

Analyzing the state of the Armenian villages, as well as the essence of the agrarian policies under the soviet system, it should be mentioned that on the whole the agriculture of the Soviet Armenia has been separated with one-side development, the matter especially has referred to the farming. The matter is that during 60 years the agriculture failed to solve the food issue of the country. The other side of the crisis that started in the economic system of the country was that the agricultural public sector, having sufficient economic and technical bases, could not provide the minimum productivity and effectiveness of the production which is available in the private sector.

The implementation of fundamental reforms in the RA agriculture supposes the radical change of the forms and methods of the economy government, as well as the change of the role of the state.

The interference of the state from the viewpoint of the agrarian policies carried out by it should include the following spheres of the regulation:

- a) the provision of the macro-economic stability of the economy in the agrarian-food complex,
- b) the formation of the agrarian market with its corresponding sub-structures,
- c) the formation of the state inspection bodies, as well as the performance of control over the use of safety engineering,
- d) the adoption of necessary laws, the creation of the control structures based on quality and anti-monopoly policies, as well as the establishment of private-voluntary cooperative societies and agricultural markets based on free competition.

The agrarian reforms have been the constituents of the economic policies in many Post-Soviet countries. The necessity of such reforms have been explained by two main reasons: first of all, by an important role of the agrarian-industrial complex available in the people's economy and the discrepancy of the previously formed system to a new macro-economic state, as well as ineffectiveness of the production, then by the loss of product markets in the countries of the socialistic camp, first of all, in the USSR.

The second chapter of the work titled "Privatization process in the agrarian system in 1990s" is dedicated to the processes of privatization of land, agricultural animals, agricultural buildings. Based on the rich base of sources, the question is risen about unfair sides and shortcomings took place during the privatization.

In the third chapter the consequences of privatization made by areas are presented. The positive sides during the privatization, as well as its negative consequences on the economy of RA were studied. The estimation of agrarian reforms implemented during the latest decade is also given.

The conclusion includes main statements, results and conclusions of the dissertation.

The dissertation consists of introduction, three chapters, conclusion and list of used materials and literature. The overall value of the work makes 153 typed pages.

